## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**19 օգոստոսի 2022 թվականի N 273-Ա**

### ՍՏԵՓԱՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման N 1 հավելվածի 3-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2018 թվականի հուլիսի 3-ի N 169-Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի 2022 թվականի օգոստոսի 18-ի N Ե-3709 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի օգնական ***Ստեփան Բաղդասարյանին*** 2022 թվականի օգոստոսի 19-ին, մեկ օրով գործուղել քաղաք Աբովյան՝ համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության *մրցութային* հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը *(հաշվապահական հաշվառման բաժնին)* գործուղման հետ կապված ծախսերը *(օրապահիկ և ճանապարհածախս)* կատարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի պահպանման ծախսերում գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

**2022 թվականի օգոստոսի 19**
**ք. Հրազդան**